ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Աշոցք 31 հուլիսի 2020թ. ժամը 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ	Գևորգ Հովհաննիսյան
Անդամներ	Նորայր Պողոսյան
	Եսայի Եսայան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար	Բաբկեն Աբրեյան

ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման, գնահատման և արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնվելիք շինանյութի համար սահմանված նախահաշվային գներն ըստ չափաբաժինների.

ՀՀ դրամ

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Նախահաշվային գինը
1	Ավազ, շինարարական	9000
2	Սիլիկոնե քսուկներ	5000
3	Ցեմենտ	8700
4	Ներկ, շինարարական	10000
5	Բետոնե բլոկներ	42000
6	Կտրող սկավառակ	20700
7	Կտրող սկավառակ	6500
8	Թիթեղ մետաղական	25000
9	Թիթեղ մետաղական	55000
10	Թիթեղ մետաղական	453600
11	Պրոֆնաստիլ	230520
12	Տախտակ, փայտյա	58800
13	Ջրահեռացման խողովակներ	98000
14	Խողովակի արմունկ	14000
15	Կոյուղու խողովակներ	79200
16	Կոյուղու խողովակներ	8800
17	Խողովակային ապրանքներ	1500
18	Խողովակային ապրանքներ	800
19	Ջրահեռացման ձագարներ	99000
20	Մոնտաժային փրփուր	7500
21	Մեխ շինարարական	3500
22	Փայտի պտուտակներ	28500
23	Փայտի պտուտակներ	5000
24	Շերտապողպատ	28000
25	Ամրացման դետալներ	15000
26	Ամրացման դետալներ	70000

Հանձնաժողովն արձանագրեց, որ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնման առարկայի բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ

օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց հանձնաժողովի անդամներին գրանցամատյանում կատարված գրառումների մասին: Ըստ այդմ հայտնի դարձավ, որ ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Մասնակցի անվանումը	Հասցե	Հեռախոս
Ա/Ձ Աղասի Սանոսյան	ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գ. Աշոցք, 3-րդ թղմ., 2-րդ փող., 8-րդ շենք, բն. 4	093 21-01-21

Քարտուղարը գրանցամատյանը և գրանցված հայտը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հանձնաժողովը գնահատեց.

1. հայտ պարունակող ծրարը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին,

2. բացված ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին,

3. մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Ծրարը կազմելու և ներկայացնելու համապատաս-խանությունը հրավերով սահմանված պահանջներին (համապատասխանում է/չի համապատասխանում)	Ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատաս-խանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին (համապատասխանում է/չի համապատասխանում)	Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերի համապատաս-խանությունը հրավերի պահանջներին (համապատասխանում է/չի համապատասխանում)
Ա/Ձ Աղասի Սանոսյան	Համապատասխանում է	Համապատասխանում է	Համապատասխանում է

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

Ա/Ձ Աղասի Սանոսյանի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը: Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն էին.

ՀՀ դրամ

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնային առաջարկ
1	Ավազ, շինարարական	7000
2	Սիլիկոնե քսուկներ	4750
3	Ցեմենտ	8100

4	Ներկ, շինարարական	5500
5	Բետոնե բլոկներ	39900
6	Կտրող սկավառակ	20700
7	Կտրող սկավառակ	6500
8	Թիթեղ մետաղական	24500
9	Թիթեղ մետաղական	53900
10	Թիթեղ մետաղական	453600
11	Պրոֆնաստիլ	203626
12	Տախտակ, փայտյա	56700
15	Կոյուղու խողովակներ	76680
16	Կոյուղու խողովակներ	8800
17	Խողովակային ապրանքներ	1050
18	Խողովակային ապրանքներ	760
20	Մոնտաժային փրփուր	6500
21	Մեխ շինարարական	3000
22	Փայտի պտուտակներ	26600
23	Փայտի պտուտակներ	4600
24	Շերտապողպատ	28000

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 2

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ինից 12-րդ, 15-րդից 18-րդ և 20-րդից 24-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել Ա/Ձ Աղասի Սանոսյանին՝ որպես գնման ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին բավարարող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից,

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 3

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնման ընթացակարգը 13-րդ, 14-րդ, 19-րդ, 25-րդ և 26-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 4

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից Ա/Ձ Աղասի Սանոսյանի հետ կնքել շինանյութի մատակարարման պայմանագիր:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 5

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 6

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնման ընթացակարգը 13-րդ, 14-րդ, 19-րդ, 25-րդ և 26-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի անգործության ժամկետ չի սահմանվում, և հանձնարարեց քարտուղարին նիստին հաջորդող 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին ուղարկել ծանուցում՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ _____ Գևորգ Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ _____ Նորայր Պողոսյան

_____ Եսայի Եսայան

Հանձնաժողովի քարտուղար _____ Բաբկեն Աբրեյան